# ԻՍԿ ԴՈՒ ԱՍԵԼ ԵՍ...

*Եսայի 54.17 – Քո դեմ ստեղծված ոչ մի զենք հաջողություն չի ունենալու, և ամեն մի լեզու, որ դատաստանի է ելնում քո դեմ, պիտի դատապարտվի: Սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և ինձնից է գալու նրանց արդարությունն* ***<u>ասում է Տերը</u>****:*

- *Եբրայերեն բնագրում «ne'um YHWH» արտահայտությունը հանդիպում է մոտ 360+ անգամ (սովորաբար նշվում է մոտ 361 անգամ):*

  *Ղուկաս 5.4-5 Եվ երբ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. Քշի՛ր դեպի խորքը, ու ձեր ուռկանները գցե՛ք որսալու: Սիմոնը նրան պատասխանեց. Վարդապե՛տ, ամբողջ գիշեր չարչարվել ենք ու ոչինչ չենք բռնել,* ***բայց քո խոսքի համար ուռկանը կգցեմ****:*

  *Գ Թագ. 17.4 – Այն հեղեղատից ջուր կխմես,* ***իսկ ես ագռավներին հրամայել եմ****, որ քեզ կերակրեն այնտեղ:*

- *Այս խոսքերը՝ «ԻՍԿ ԴՈՒ ԱՍԱՑԻՐ», վերցված են Հակոբի աղոթքից՝ Ծննդոց 32-րդ գլխից:*

- *Հակոբը պատրաստ էր առերեսվելու իր չլուծված անցյալին:*

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԾՆՆԴՈՑ 32

*9 Եվ Հակոբն ասաց. Ո՛վ իմ հոր Աբրահամի Աստված և իմ հոր Իսահակի Աստված, ո՛վ Տեր, **<u>որ ինձ ասացիր</u>**. Վերադարձի՛ր քո երկիրը և քո ազգականներին, և քեզ բարիք կանեմ: 10 Ես արժանի չեմ այն բոլոր ողորմություններին և ամեն հավատարմությանը, որ ցույց ես տվել քո ծառային, որովհետև իմ գավազանովն անցա այս Հորդանանից, իսկ հիմա երկու խմբի տեր եմ դարձել: 11 Հիմա ինձ ազատի՛ր իմ եղբայր Եսավի ձեռքից, որովհետև վախենում եմ նրանից. միգուցե գա և հարվածի ինձ և մորն՝ երեխաների հետ: 12 **<u>Իսկ Դու ասել ես</u>**, թե՝ անպայման քեզ բարիք կանեմ և քո սերունդը ծովի ավազից ավելի կանեմ, որ շատ լինելուց չի հաշվվի:*

- *Երկու անգամ Հակոբը աղոթքի մեջ կրկնում է այս հզոր խոսքերը՝ «**<u>Իսկ Դու ասել ես</u>**» (խոսք 9 և 12):*

- *Հակոբի աղոթքը Աստծու Խոսքի ուղիղ մեջբերումն է՝ ուղղված Աստծուն:*

## «ԻՍԿ ԴՈՒ ԱՍԱՑԻՐ»-Ը ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՂՈԹՔԻ ՄԵՋ:

***որովհետև***

*...անհնար է՝ Աստված սուտ խոսի (Եբր. 6.18):*

*Աստվածաշունչը ամեն օր կարդալը օգնում է ավելի արդյունավետ աղոթել:*

*Աստված միշտ արձագանքում է Իր Խոսքին:*

*Ա Հովհաննես 5.14-15 – Սա է այն ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, որ նրա նկատմամբ ունենք, թե ինչ որ **ըստ նրա կամքի** խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, որ լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք նաև, որ նրանից ստանում ենք մեր խնդրածները:*

- *Նրա կամքը գտնում ենք Նրա Խոսքում:*

## ԻՆՉ ԷՐ ՄԵՋԲԵՐՈՒՄ ՀԱԿՈԲԸ:

*Հակոբը վերադառնում է երկու վայր, որտեղ Աստված խոսել էր իր հետ:*

- ***Առաջին վայրը՝ Ծննդոց 28, որը եղել էր 20 տարի առաջ:***

*Ծննդոց 28.12-15 – **12** Եվ երազ տեսավ. ահա երկրի վրա դրված էր մի սանդուղք, որի ծայրը դիպչում էր երկնքին: Եվ ահա Աստծու հրեշտակները նրանով բարձրանում ու իջնում էին: **13** Եվ ահա Տերը կանգնած էր դրա վրա. ...**15** Ահա ես քեզ հետ եմ և ամեն տեղ, ուր էլ գնաս, ես կպահպանեմ քեզ և քեզ կվերադարձնեմ այս երկիրը, որովհետև քեզ չեմ թողնի, մինչև որ չկատարեմ այն, ինչ որ ասել եմ քեզ:*

***19** Եվ այդ տեղի անունը Բեթել դրեց.*

- ***Երկրորդը՝ մեկ ամիս առաջ, Ծննդոց 31***

  *Ծննդոց 31.3 – Տերն ասաց Հակոբին. Վերադարձի՛ր քո հայրերի երկիրն ու քո ազգականների մոտ, և ես քեզ հետ կլինեմ:*

- ***Առաջին երազը՝ ժամանակի և խոստումի  հետ էր կապված:***

- ***Երկրորդ երազը՝ վերադարձ դեպի խոստումը:***

  ***Երկուսի համար էլ մենք պետք է լսենք Աստծու ձայնը:***

  ***Հորավոր աղոթքը այն է, երբ մեջբերում ես Աստծու խոսքը՝ Աստծուն ուղղած:***

  ***Իսկ Դու ասել ես...***

  ***Մովսես.*** *Հիշի՛ր քո ծառաներ Աբրահամին, Իսահակին և Իսրայելին, որոնց դու երդվեցիր քո անձով և ասացիր նրանց. Երկնքի աստղերի չափ պիտի շատացնեմ ձեր սերունդը և այս ամբողջ երկիրը, որի մասին խոսեցի, ձեր սերնդին պիտի տամ, և հավիտյան պիտի ժառանգեն (Ելից 32.13):*

  *Մովսեսն ասաց Տիրոջը. ...**Դու ինձ ասացիր**. "Քեզ ճանաչում եմ քո անունով, և իմ առջև շնորհ գտար (Ելից 33.12)*

***Դավիթ.*** *Եվ հիմա, ո՜վ Տեր Աստված, **<u>այս խոսքը, որ ասել ես</u>** քո ծառայի և նրա տան համար, հավիտյան հաստատի՛ր և արա՛ ասածիդ պես (2 Թագ. 7.25)*

***Հովսափաթի աղոթքը. «Մի՞թե Դու չես ասել...»***

***6*** *Ո՛վ մեր հայրերի Տեր Աստված, **դու չե՞ս այն Աստվածը**, որ բնակվում է երկնքում և տիրում է ազգերի բոլոր թագավորությունների վրա. քո ձեռքում են զորությունն ու ուժը, և ոչ ոք չի կարող քո դեմ կանգնել: **7 Չէ՞ որ դու**, ո՛վ մեր Աստված, քշեցիր այս երկրի բնակիչներին Իսրայելի քո ժողովրդի առջևից և երկիրը հավիտյան տվեցիր քո սիրելի Աբրահամի սերնդին:*

***14*** *Այն ժամանակ հավաքված ժողովրդի մեջ Տիրոջ հոգին իջավ (Բ Մնաց. 20.6-7,14)*

## «ԻՍԿ ԴՈՒ ԱՍԱՑԻՐ»-Ը ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՂՈԹՔԻ ՄԵՋ:

***Իսկ Դու ասել ես***

*Եթե թշնամին հեղեղի պես գա, Տիրոջ Հոգին դրոշ (statndard) պիտի բարձրացնի նրա դեմ (Եսայի 59.19):*

***Իսկ Դու ասել ես***

*Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, ու հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է նա, որ ձեր մեջ է, քան թե նա, որ աշխարհի մեջ է (Ա Հով. 4.4):*

***Իսկ Դու ասել ես***

*Նրա վերքերով մենք բժշկվեցինք (Եսայի 53.5):*

***Իսկ Դու ասել ես***

*Բայց այս ամենի մեջ մենք ավելի քան հաղթողներ ենք Նրանով, ով մեզ սիրեց (Հռ. 8.37):*

***Իսկ Դու ասել ես***

*Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ (Հռ. 8.31):*

***Իսկ Դու ասել ես***

*Տիրոջ անունն ամուր աշտարակ է. արդարը վազում է այնտեղ և ապաստան գտնում (Առակաց 18.10)*

***Իսկ Դու ասել ես***

*Քեզ չեմ թողնելու ու չեմ լքելու: Այնպես որ համարձակվում ենք ասել. Տերն է իմ օգնականը, և ես չպիտի վախենամ. մարդն ինձ ի՞նչ կարող է անել (Սաղ. 118.6, Եբր. 13:5-6):*

***Իսկ Դու ասել ես***

*Կատարյալ խաղաղության մեջ կպահես նրան ում միտքը Քո վրա է մնացել, որովհետև Քեզ է հուսացել (Եսայի 26.3):*

***Իսկ Դու ասել ես***

*Որովհետև քեզ համար հրամայել է իր հրեշտակներին, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհների մեջ (Սաղ. 91.11)*

***Իսկ Դու ասել ես***

*Ամբողջ տասանորդը գանձատո՛ւն տարեք, որպեսզի իմ տան մեջ պաշար լինի, և սրանով ինձ փորձե՛ք,- ասում է*

*Զորքերի Տերը,- թե արդյոք ձեզ համար չեմ բացելու երկնքի պատուհանները և օրհնություն հեղելու ձեզ վրա, այնքան շատ, որ բավարար տեղ չլինի (Մաղաքիա 3.10)*

***Իսկ Դու ասել ես***

*Երբ ջրերի միջով անցնես, ես քեզ հետ կլինեմ, երբ անցնես գետերով, դրանք քեզ չեն ողողի, երբ քայլես կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չի լափի, (Ես. 43.2)*

***Իսկ Դու ասել ես***

*Արդ հնազանդվե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, ու նա ձեզանից կփախչի (Հակոբոս 4.7):*

***Իսկ Դու ասել ես***

*Այն ամենը, ինչ աղոթքով խնդրեք, հավատացե՛ք, որ կստանաք, ու դա կտրվի ձեզ (Մարկոս 11.24):*

***Իսկ Դու ասել ես***

*Կանչի՛ր ինձ, և ես քեզ կպատասխանեմ, և ես քեզ մեծամեծ ու խորհրդավոր բաներ պիտի պատմեմ, որոնք դու չես իմացել (Երեմիա 33.3):*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ